ՀՏԴ 332.14

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Ա.Սաղոյան

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեև ներկայումս համաշխարհային տնտեսության զարգացման անորոշությունների պայմաններում դժվարացել է արդյունաբերական քաղաքների համար ճշգրիտ ռազմավարություն մշակելու գործը, կան որոշակի գործոններ, որոնցից կախված է այդպիսի բնակավայրերի ապագան: Հոդվածում ուսումնասիրված են այդ գործոնները և տրված են գնահատականներ դրանց վարքագծի և ազդեցությունների վերաբերյալ: Քննարկման նյութ է դարձել նաև արդյունաբերական քաղաքների նորարարական զարգացման լայնորեն տարածված հայեցակարգը և «հարմարեցվող վերակազմավորման» ռազմավարությունը, ինչպես նաև դրա ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրությունը:

Առանցքային բառեր. *քաղաքներ, զարգացման ռազմավարություն, նորարարական զարգացում, հայեցակարգ*

Հասկանալի պատճառներով համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս անորոշությունների պայմաններում ճշգրիտ ռազմավարություն մշակել հնարավոր չէ, բայց կարելի է առանձնացնել մի քանի գործոններ, որոնցից կախված է արտադրական տարածքների ճգնաժամի խորությունը և նաև կոնկրետ ու անհրաժեշտ մասշտաբի ձևափոխություններն այս կամ այն զարգացման սցենարի դեպքում: Այդ գործոնները ներառում են.

- արդյունաբերական գործունեության տեսակները և շուկայական պայմանները (արդյոք կան ապրանքի տեխնոլոգիական բարելավման հեռանկարներ և պահանջարկ դրա նկատմամբ),
- ազդեցության արգելափակման խորությունը (ամուր ցանցից մինչև մասնատված),
- կլաստերի չափը և բազմազանացման (դիվերսիֆիկացիայի) աստիճանը [1]:

Այդ գործոողությունների վերլուծության հիման վրա կատարվում է ռազմավարության ընտրություն, որի հիմքում ընկած պետք է լինի հետևյալ հարցի հստակ պատասխանը. արդյոք ամբողջովին հրաժարվել թողարկվող արդյունաբերական արտադրանքից, իսկ այնուհետ գնալ դեպի «ստեղծագործ (կրեատիվ) արտադրության» զարգացման ճանապարհով կամ դիվերսիֆիկացնել գոյություն ունեցողը, թ՞ե ստեղծել նոր արդյունաբերական կլաստեր, որը համահունչ կլինի ժամանակակից տնտեսությանը:

Այս դեպքում, մեկ ռազմավարությունը չի բացառում և, ընդհակառակը, պետք է անպայման ներառի մյուս ռազմավարության տարրերը: Այսպիսով, «արդյունաբերական» շարունակության ուղղությունը հին արդյունաբերական քաղաքներում պարտադիր ներառում է հետարդյունաբերական տնտեսության տարրերը, քանի որ այն ենթադրում է, առաջին հերթին,

սոցիալական ենթակառուցվածքի ակտիվ վերակազմավորում, և երկրորդ՝ քաղաքի տնտեսական բազայի դիվերսիֆիկացում, այդ թվում երրորդական և չորրորդական հատվածի զարգացում, երրորդ՝ քաղաքի կերպարի փոփոխություն (ինչի կարիքն ունեն հին արդյունաբերական քաղաքները) և որի համար «ստեղծագործ արդյունաբերության» զարգացումն անհրաժեշտ տարր է հանդիսանում: Միևնույն ժամանակ քաղաքներում մշակույթի և կրթության ռազմավարության զարգացումը ներառում է նաև տեխնոլոգիական նորարարության զարգացման տարրեր՝ հետազոտական ինստիտուտներ, բարձր տեխնոլոգիական ընկերություններ և այլն: Այսպիսով, «ստեղծագործ արդյունաբերությունը» առաջին հերթին անհրաժեշտ ուղեկցող բաղադրիչ է, իսկ երկրորդ հերթին՝ քաղաքի տնտեսական աճի հիմք: Իրականում ռազմավարական ընտրության առանցքը քաղաքական առաջնահերթության հարցերից է և այն մեծապես կախված է քաղաքում առկա ռեսուրսներից: «Ստեղծագործ արդյունաբերության» զարգացումը որպես տնտեսական հիմք քաղաքի հնարավոր տնտեսական ակտիվության շարժիչն է, որտեղ գրեթե չի մնացել արդյունաբերական բազա: Սակայն այդ ընտրությունը կարևոր է մնում շատ քաղաքներում, որտեղ շարունակում են գործել արդյունաբերական ձեռնարկությունները: Երկու տեսակի հին արդյունաբերական քաղաքների խնդիրների վերլուծությունից հետևում է, որ արդյունաբերական անցյալը ստեղծում է տրանսպորտային, բնակարանային, բնապահպանական և որ ամենակարևորն է՝ ապրանքային և սպասարկման նշանների բրենդինգի խնդիրներ: Այսպիսով, ի լրումն քաղաքի տնտեսական բազայի վերակառուցման կամ ստեղծման, հին արդյունաբերական քաղաքների ռազմավարության զարգացումը ևս ներառում է այլ ոլորտների ծրագրեր: Հին արդյունաբերական քաղաքների զարգացման կարևորագույն միտումներից մեկն այն է, որ ավելի կատարելագործված է դառնում սոցիալական ենթակառուցվածքը: Բազմաթիվ քաղաքներում առկա են տրանսպորտային զարգացման նախագծեր, սակայն այդ նախագծերի նպատակն ու բովանդակությունը կարող են տարբեր լինել, մասնավորապես.

- քաղաքի կենտրոնական հատվածում հասարակական տրանսպորտի ցանցի ծրագրերի զարգացումն ավտոմեքենաների քանակի կրճատման նպատակով, որն առաջարկում է այլընտրանք քաղաքի ծայրամասերին, որտեղ ավտոմեքենան միակ շարժական միջոցն է,
- քաղաքի ներառումը միջքաղաքային և միջազգային տրանսպորտային հոսքին, քաղաքի դիրքավորումը որպես մատակարարման կենտրոն:

Քաղաքաշինության բնագավառում ծրագրերն ուղղված են.

- հին թաղամասերի վերանորոգմանը և վերականգնմանը,
- նախկին արդյունաբերական տարածքների վերականգնմանը սոցիալական ենթակառուցվածքների և բնակելի ու առևտրային անշարժ գույքի միջոցով,
- ժամանցի գոտիների ստեղծմանը,
- քաղաքի ճարտարապետության ձևավորմանը (ներառյալ խորհրդանշական կառույցների ստեղծումը):

Ավելի մասնագիտացված ռազմավարություններից են՝ զբոսաշրջության ոլորտի զարգացումը, խոշոր ընկերությունների գլխամասերի ներգրավումը և բիզնես տուրիզմի զարգացումը:

Բնապահպանական նախաձեռնությունները կարող են մշակված լինել տարբեր նպատակների համար.

- շատ քաղաքների համար կարևոր է դրանց բնապահպանական վիճակի բարելավման քաղաքականությունը,
- բնապահպանական քաղաքականությունը կարելի է նաև համատեղել սոցիալական ենթակառուցվածքների զարգացման քաղաքականության հետ, եթե դա ուղղված է բնակիչների և զբոսաշրջիկների համար հանգստի գոտիների ստեղծմանը և զարգացմանը,
- ձեռնարկության գործունեության կարգավորումը բնապահպանական տեսանկյունից դառնում է զարգացման խթան այդ ոլորտում:

Այնուամենայնիվ, այդ ծրագրերը մնում են երկու հիմնական տնտեսական վերակազմակերպման տարբերակների լրացում: Ավելի մանրամասն կանգ առնենք նորարարական զարգացման ռազմավարությունների և «ստեղծագործ արդյունաբերության» զարգացման վրա: Ռազմավարության վերջին խումբը հատկապես հետաքրքրական է, քանի որ այն ի հայտ է եկել համեմատաբար վերջերս և ներկայումս դրա շուրջ ընթանում են ինտենսիվ գիտական բանավեճեր, ինչպես նաև քննարկվում են տարբեր հայեցակարգեր, որոնցից շատերը հաճախ օգտագործվում են գործնականում (նույնիսկ ձևական առումով):

Նորարարական զարգացման ռազմավարություն. կարելի է տարանջատել նորարարական զարգացման ռազմավարության երկու տեսակետները, որոնք ուղղված են այդ խնդիրների լուծմանը:

Տեխնոլոգիական հետամնացության հնարավոր խնդիրների մասին խոսելով տարբերակում են երկու հիմնական ռազմավարություններ [2].

- ամբողջական մասնագիտացված փոփոխություն («ստեղծագործական ոչնչացում») ,
- առկա ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում («հարմարվողական վերակազմավորում») :

«Ստեղծագործական ոչնչացում» նշանակում է ստեղծել բոլորովին նոր արդյունաբերություն, որո ապավինում է միայն իր սեփական հնարավորություններին և չի դասվում տեղական ռեսուրսներով զարգացմանը, քանի որ դրա անհրաժեշտ պայմանների (գիտելիքների և հմտությունների իմացության) և շրջակա միջավայրում կա մի մեծ անջրպետ [2] (օրինակ, միկրոէլեկտրոնիկայի առաջացումը): Այնուամենայնիվ ակնհայտ է, որ այստեղ նույնպես անհրաժեշտ է զարգացած կրթական համակարգ և բաց բազմազան միջավայր: Հետևաբար «ստեղծագործ ոչնչացման» գաղափարի ի հայտ գալն ավելի շատ բնորոշ է քաղաքներին, որոնք զարգացնում են նորարարական արդյունաբերությունը: Միևնույն ժամանակ նման ոլորտների

առաջացման պլանավորումը գրեթե անհնար է, կարելի է միայն ստեղծել պայմաններ, որոնք բարձրաձայնում են դրանց առաջացման պայմանները: Ուստի, այս տարբերակը որպես ռազմավարական զարգացման ուղղություն կարող է լինել միայն պայմանականորեն:

«Հարմարեցվող վերակազմավորումը» հիմնված է գոյություն ունեցող հետազոտական բազայի վրա, հաշվի է առնում գոյություն ունեցող ընկերության կամ ընկերությունների մասնագիտացումը և այն որպես հիմք ընդունում հետագա տնտեսական զարգացման համար: Արտադրության տարածքային ռազմավարության զարգացման տեսանկյունից նման մոտեցումը ենթադրում է հաշվի առնել տարածաշրջանի ինստիտուցիոնալ և ֆիզիկական միջավայրը, որոնք էական ազդեցություն ունեն առկա ընկերության կամ ընկերությունների հարմարվողական կարողությունների վրա: Ըստ այդմ, կառավարման խնդիրն է ստեղծել պայմաններ վերակառուցման առկա տվյալների բազայում: Այդ մոտեցումը չի հետաձգում նոր կլաստերների և արդյունաբերության ստեղծումը, սակայն դրանք ինքնաբերաբար չեն հայտնվում, այլ առկա ընկերության կամ ընկերությունների հարմարեցման հետևանք են: Այսպես, հին արդյունաբերական շրջաններում առանձնացնում են նոր կլաստերների ստեղծման երեք անհրաժեշտ պայմաններ [3].

- կլաստերի արտադրանքը, անկախ նրանից դա ապրանք է թե ծառայություն, պետք է համաշխարհային շուկայում պահանջված լինի, միայն այս դեպքում է հնարավոր կայուն տնտեսական աճ,
- կլաստերի առաջացման հետևանք պետք է լինեն ռեսուրսները և ներքին պայմանները,
- ներքին կարողություններն ուժեղացնելու համար անհրաժեշտ է տեղական արտադրական ընկերությունների ռազմավարությունների դիվերսիֆիկացիայի հետ միասին քաղաքական ընտրության համակարգումը:

Սակայն, տվյալ դասակարգումը պետք է համալրել ևս մեկ կարևոր ռազմավարության տեսակով՝ բոլորովին նոր արդյունաբերական արտադրանքի թողարկման զարգացում, որպեսզի կրճատվեն եղած խնդիրները: Մի կողմից, այդ արդյունաբերությունների արտադրանքն ուղղակիորեն կապված չէ տեղական արտադրության արտադրանքի թողարկումից, մյուս կողմից այն ուղղված է հենց արդյունաբերական ձեռնարկությունների և քաղաքների սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծմանը:

Օրինակ, Ռուրի նահանգի բնապահպանական կլաստերը զարգացման նոր երևույթ չէ, քանի որ այն ձևավորվել է առկա արդյունաբերական կլաստերի հիման վրա: Միևնույն ժամանակ այդ սկզբունքները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է վերափոխման մեխանիզմների աջակցություն, որոնք առկա են ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներում: Ինստիտուցիոնալ թակարդից դուրս գալու համար պահանջվում են ինստիտուցիոնալ փոփոխություններ, որոնք ուղեկցվում են զգալի մեծության հասնող վերափոխման ծախսերով: Մասնավորապես, արգելափակման ազդեցության երևույթի վերացման համար գլոբալ մարտահրավեր է ետ վարժվելը կամ մոռացությունը, գործնական փոփոխությունը (հմտությունները) և անհատների

ու կազմակերպությունների փոփոխությունները [4]: Այնպես որ առանց արտաքին ազդեցության աշխատակիցները չեն կարող արագ վերակառուցել իրենց արժեքային համակարգը մրցակցային միջավայրում աշխատելու համար և դառնալ ստեղծագործ մասնագետներ, իսկ ձեռնարկության կառավարիչները կարող են դիմակայել մրցակիցների կորպորատիվ վարքագծին և գիտելիքների փոխանակման գործընթացին: Կառավարչական խնդիրն այն է, որ ստեղծվեն առկա դերակատարների (լինի դա ընկերություն, գիտական կազմակերպություն կամ տեղացիներ) համար անհրաժեշտ որոշակի շահեր ու դիրքորոշումներ: Ներկայումս տարածաշրջանային զարգացման առավել տարածված հայեցակարգը, որը կենտրոնանում է նորարարական զարգացման արգելափակման հետևանքների հաղթահարման վրա, «սովորող մարզի» (learning region) հայեցակարգն է: Ըստ այս հայեցակարգի, հիմնական դերակատարները (քաղաքական գործիչները, առևտրի պալատները, արհեստակցական միությունները, բուհերը, հետազոտական ինստիտուտները և այլն) սերտորեն և միևնույն ժամանակ շատ ճկուն կապված են և գտնվում են շարունակական ուսուցման մեջ: Գիտելիքն ակտիվ է կամ ապրանք, իր յուրահատուկ առանձնահատկությամբ այն «պահուստ» է: Կրթությունը «հոսք» է, մի գործընթաց, որը հանգեցնում է գիտելիքի տարածմանը կամ նոր գիտելիքի արտադրությանը [4]:

Այսպիսով, շարունակական անհատական և կազմակերպական ուսուցումը տարածքներում (շրջաններում) ընկերության նորարարական գործունեության արդյունքն է: Անհատների թիրախավորումը (նպատակադրումը) և կազմակերպության շարունակական ուսուցման գործընթացը գիտելիքահենք տնտեսության կարևոր բաղադրիչն են: Կրթական տարածաշրջանի գաղափարն առավել մոտ է հին արդյունաբերական խնդիրների լուծմանը, քանի որ ուշադրություն է դարձնում անցյալում ինստիտուցիոնալ սխալների վրա և դասեր քաղում, ինչը թույլ չի տալիս կրկնել անցյալի զարգացման սխալները (path-dependent development) [5]:

А.А.Садоян

СТРАТЕГИЧЕСКИЕ НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННЫХ ГОРОДОВ

Несмотря на то, что в условиях неопределенности развития мировой экономики затруднена разработка точной стратегии развития промышленных городов, тем не менее существуют определенные факторы, от которых зависит будущее таких городов. В статье изучены эти факторы и представлена оценка их изменений и взаимодействий. Также предметом исследования стали широко распространенная концепция инновационного развития городов и стратегия “адаптационной реструктуризации”, а также анализ ее сильных и слабых сторон.

***Ключевые слова**: города, стратегия развития, инновационное развитие, концепция*

A.A.Sadoyan

STRATEGIC DIRECTIONS OF DEVELOPMENT OF INDUSTRIAL CITIES

Despite the fact that in conditions of uncertainty for the world economy is not possible to develop a precise strategy of development of industrial cities, however, there are certain factors that determine the

future of industrial cities. The author examines these factors and gives his own assessment of their changes and interactions.

The object of study has also become a widespread concept of innovative urban development, as well as the strategy of "adaptive restructuring." The author analyzes the use of such a strategy, and points out its strengths and weaknesses.

***Keywords**: city, development strategy, innovative development, concept*

Գրականություն

1. **Todtling F., Trippl M**. Like Phoenix from the Ashes? The Renewal of Clusters in Old Industrial Areas//Urban Studies. – May, 2004.- Vol. 41, № 5/6.- 1178 p.
2. **Boschma R., Lambooy J.** The prospects of an adjustment policy based on collective learning in old industrial regions// GeoJournal. - 1999. - Vol. 49, N 4. -P. 395-396.
3. **Rehfeld D.** Disintegration and reintegration of production clusters in the Ruhr area//The Rise of the Rustbelt. - London, GBR: U C L Press Limited, 1995. - 43 p.
4. **Cities** and Regions in the New Learning Economy. - Paris: OECD, 2001. - 106 p.
5. **Hassink R.** The learning Region: A Policy Concept to Unlock Regional Economies from Path Dependency? // Conf. Regionalization of Innovation Policy – Options and Experiences, June 4-5. 2004. - Berlin, 2004. - P. 68-101.

***Սադոյան Արա Ալֆրեդի** (ՀՀ, ք. Երևան) - ք.Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի ղեկավար, ՃՇՀԱՀ, հայցորդ, (+374) 98999998:*
***Садоян Ара Алфредович** (РА, г. Ереван) - руководитель административного округа "Кентрон" г.Ереван, НУАСА, соискатель, (+374) 98999998.*
***Sadoyan Ara Alfred** (RA, Yerevan) - head of the administrative district of Kentron of Yerevan, NUACA, applicant, (+374) 98999998.*

Ներկայացվել է՝ 10.12.2015 թ.
Ընդունվել է տպագրության՝ 14.12.2015թ.